ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԵՎ
ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF LABOR AND
SOCIAL ISSUES
CENTRE OF HOME SOCIAL
SERVICE PROVISION FOR SINGLE
ELDERLY AND DISABLED PEOPLE

<<_14_>>__փետրվարի__2014թ.
№____02-Գ_____

<<ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով
շրջանակային համաձայնագիր
կնքած կազմակերպություններին

Հարգելի մասնակից,

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/04>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության միջև կնքված N ՇՀԱՊՁԲ-11/01 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Ապրանքների մատակարարման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ **ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան Անդրանիկի 74շ. հասցեով N 9 սենյակ, Մ. Զաքարյանին, մինչև **2014 թ. փետրվարի 26–ը ժամը 12^{00}-ն**:

Հայտերը կբացվեն <<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն>> ՊՈԱԿ-ի շենքում Անդրանիկի 74շ. հասցեով N 9 սենյակում, **2014 թ. փետրվարի 26–ին ժամը 12^{00}-ին**:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/04>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը; Ընդ որում՝

- Նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- Նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Լ. Աղաջանյան

Հավելված 1

«ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից N «ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով հայտարարված ընթացակարգի ---------- չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____2014 թ.
ամսաթիվը, ամիսը

Հավելված 2

«ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N «ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.
Գնման ընթացակարգի մասնակցի անվանումը /անունը/

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ-ն*	Առաջարկված պայմանագրի գինը	
				թվերով	տառերով
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1					

*** 3-րդ սյունյակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը, ընդ որում անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր գնման առարկայի մեկ միավորի արժեքը**

**** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

_____ _____

Մասնակցի անվանումը /անունը/ (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը (ստորագրությունը)

Կ. Տ.

<<____>>_____2014 թ.

ամսաթիվը, ամիսը

ՆԱԽԱԳԻԾ **ԴԵՂՈՐԱՅՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4-_

ք. Երևան <<_____>>_____2014թ..

<<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Լ. Աղաջանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և _____-ն, ի դեմս ընկերության տնօրեն _____-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքը մատակարարվում է է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N հավելվածով՝1 գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է _____ /_____/ ՀՀ դրամ, որից ԱԱՀ կազմում է _____ՀՀ դրամ:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն

հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 31-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 4) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման

հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9,5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 9 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ ք. Երևան Անդրանիկի 74շ. h/h 163008102713 ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ ՀՎՀՀ 01537679	
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
<<___>>_____2014թ. կնքված
ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

<<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն>> ՊՈԱԿ - ի 2014թ. - ի գնման ենթակա դեղորայքի

Չափաբաժնի համարը	Անվանումը	դեղերի ATC ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը ըստ << դեղերի պետական գրանցամատյանի*	Չ/Մ	քանակ	Տեխնիկական բնութագիրը
1	Ամօքսիցիլին+քլավուլանաթթու	J01CR02	դեղահատ	1000	ամօքսիցիլին, կալիումի քլավուլանատ 625մգ (500մգ+125մգ) (14) արտադրված Միացյալ Թագավորությունում կամ համարժեք
2	Ացետիլսալիցիլաթթու	B01AC06	դեղահատ	500	ացետիլսալիցիլաթթու 300մգ (20) գերմանական կամ համարժեք
3	Ամօքսիցիլին	J01CA04	դեղապարկուճ	3500	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ) 500մգ (100/10x10/) սերբիական կամ համարժեք
4	Ամլոդիպին	C08CA01	դեղահատ	4000	ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) 10մգ (30/3x10/) հայկական կամ համարժեք
5	Ատենոլոլ	C07AB03	դեղահատ	4000	ատենոլոլ 50մգ (30/3x10/) բելոռուսական կամ համարժեք
6	Հիդրատացված դիհիդրալազինի սուլֆատ,ռեզերպին, հիդրոքլորոթիազիդ	C02LA51	դեղահատ	6000	հիդրատացված դիհիդրալազինի սուլֆատ,ռեզերպին, հիդրոքլորոթիազիդ (250/10x5x5/) հնդկական կամ համարժեք
7	Ացետիլսալիցիլաթթու	N02BA01	դեղահատ	1500	ացետիլսալիցիլաթթու 500մգ բլիստերում (10) հայկական կամ համարժեք
8	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում)	N02BB02	լուծույթ ներարկման	40	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում) 500մգ/մլ, 2մլ ամպուլներ (10) հայկական կամ համարժեք
9	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում)	N02BB02	դեղահատ	600	մետամիզոլի նատրիում 500մգ բլիստերում (10) հայկական կամ համարժեք
10	Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին	N02BA51	դեղահատ	2000	ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին (0.2գ+0.2գ+0.04գ) (6,10) ուկրաինական կամ համարժեք
11	Լեղի չոր, սխտոր չորացրած, եղնջի տերևներ, ակտիվված ածուխ	A05AX	դեղահատ	1000	եղնջի, սխտորի հանուկներ, լեղի, ակտիվացված ածուխ (5մգ+40մգ+80մգ+25մգ) (10) ռուսական կամ համարժեք
12	Սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ	J01EE01	դեղահատ	1200	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ 400մգ+80մգ (20) լեհական կամ համարժեք
13	Բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ)	R05CB02	դեղահատ	2000	բրոմհեքսին 0.008գ (10,20) ռուսական կամ համարժեք
14	Բիսակոդիլ	A06AB02	դեղահատ	4000	բիսակոդիլ 5մգ, բլիստերում (40/4x10/) լատվիական կամ համարժեք
15	Սուլֆոկամֆորաթթու, նովոկայինի հիմք	R07AB	ամպուլ	70	սուլֆոկամֆորաթթու, նովոկայինի հիմք 49.6մգ/մլ+ 50.4մգ/մլ, 2մլ ամպուլներ (10) հայկական կամ համարժեք

16	Ցեֆտրիաքսոն	J01DD04	դեղանոշի ներարկում	10	ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոնի նատրիումական աղ) 1000մգ, ապակե սրվակ և 3,5մլ լուծիչ ամպուլում եգիպտական կամ համարժեք
17	Ցիպրոֆլոքսացին	J01MA02	դեղահատ	3000	ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ 500մգ (10) բելառուսական կամ համարժեք
18	Ֆլյուկոնազոլ	J02AC01	դեղապատիճ	30	ֆլուկոնազոլ 150մգ (1; 2; 3 (1x3), 3(3x1) և 7) ուկրաինական կամ համարժեք
19	Սալբուտամոլ	R03AC02	դեղահատ	400	սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ) 4մգ, ապակե տարայում (30) լեհական կամ համարժեք
20	Նիտրոֆուրանտոյին	J01XE01	դեղահատ	400	նիտրոֆուրանտոին 50մգ (10) բելառուսական կամ համարժեք
21	Նիտրոքսոլին	J01XX07	դեղահատ	1000	նիտրոքսոլին 50մգ,պլաստիկե տարայում (50) սլովենական կամ համարժեք
22	Նիֆեդիպին	C08CA05	դեղահատ	5000	նիֆեդիպին 10մգ (50/5x10/) բուլղարական կամ համարժեք
23	Կապտոպրիլ	C09AA01	դեղահատ	5760	կապտոպրիլ 50մգ,բլիստերում (24/2x12/) հայկական կամ համարժեք
24	Պենտաէրիթրիտիլի տետրանիտրատ	C01DA05	դեղահատ	1000	պենտաէրիթրիտիլի տետրանիտրատ 10մգ, բլիստերում (50/5x10/) ռուսական կամ համարժեք
25	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), հիդրոքլորոթիազիդ	C09BA02	դեղահատ	1200	էնալապրիլի մալեատ, հիդրոքլորոթիազիդ 10մգ+12.5մգ (20/2x10/) սլովենական կամ համարժեք
26	Լիզինոպրիլ 10մգ	C09AA03	դեղահատ	1920	լիզինոպրիլ 10մգ (24) հայկական կամ համարժեք
27	Վերապամիլ	C08DA01	դեղահատ	1200	վերապամիլ 40մգ (30/2x15/) մակեդոնական կամ համարժեք
28	Դիգոքսին	C01AA05	դեղահատ	2500	դիգոքսին 0,25մգ,բլիստերում (50/2x25/) լատվիական կամ համարժեք
29	Պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ)	A03AD01	ամպուլ	60	պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ) 2% (2մլ), 2մլ ամպուլներ (10) բելառուսական կամ համարժեք
30	Բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ)	C04AX	ամպուլ	120	բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ) 10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10) հայկական կամ համարծեք
31	Մագնեզիումի սուլֆատ	B05XA05	ամպուլ	10	մագնեզիումի սուլֆատ 25% (5մլ), 5մլ ամպուլներ (10) հայկական կամ համարժեքը
32	Ամինոֆիլին	R03DA05	ամպուլ	10	թեոֆիլին, էթիլենդիամին 19,2մգ/մլ+4,8մգ/մլ, 5մլ ամպուլներ (10) հայկական կամ համարժեք
33	Ամինոֆիլին	R03DA05	դեղահատ	2400	ամինոֆիլին 150մգ (30) բելառուսական կամ համարժեք
34	Ֆուրոսեմիդ	C03CA01	ամպուլ	40	ֆուրոսեմիդ 10մգ/մլ, 2մլ ամպուլներ (10) հնդկական կամ համարժեք
35	Ֆուրոսեմիդ	C03CA01	դեղահատ	2000	Ֆուրոսեմիդ 40մգ, բլիստերում (50/5x10/և 50/2x25/) բելառուսական կամ համարժեք
36	Հիդրոքլորոթիազիդ	C03AA03	դեղահատ	1000	հիդրոքլորոթիազիդ 25մգ,բլիստերում (20) հունգարական կամ համարժեք
37	Իզոսորբիդի դինիտրատ	C01DA08	դեղահատ	2000	իզոսորբիդի դինիտրատ 20մգ (20, 50) գերմանական կամ համարժեք
38	Ինոզին	C01EB	դեղահատ	2000	ինոզին 200մգ, բլիստերում (50/5x10/,5000/500x10/) բելառուսական կամ համարժեքը
39	Տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ)	C01EB15	դեղահատ	300	տրիմետազիդին 35մգ (60) ֆրանսիական կամ համարժեք
40	էբաստին	R06AX22	դեղահատ	60	էբաստին 20մգ (10, 20) իսպանական կամ համարժեքը
41	Պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին)	C09AA04	դեղահատ	60	պերինդոպրիլ արգինին 5մգ,պլաստիկե տարա (30) ֆրանսիական կամ համարժեք

42	Կատվախոտի հանուկ	N05CM09	դեղահատ	61000	կատվախոտի հանուկ 20մգ, բլիստերում (10) ևապակե տարայում (50) բելառուսական կամ համարժեք
43	Կատվախոտի ոգեթուրմ	N05CM09	22հիկ	1505	կատվախոտի ոգեթուրմ 30մլ ապակե 22հիկ բելառուսական կամ համարժեք
44	Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում	C01EX	դեղահատ	2500	մենթոլ, իզովալերիանաթթվի մեթիլ էսթեր 60մգ (6) ռուսական կամ համարժեք
45	Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում	C01EX	դեղապատիճ	2000	մենթոլ, իզովալերիանաթթվի մեթիլ էսթեր 100մգ(0.1գ) (20) բելառուսական կամ համարժեք
46	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ)	A12CC05	դեղահատեր թաղանթապատ	4000	մագնեզիում (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիում (կալիում C49ասպարտատի հեմիհիդրատ) 140մգ+158մգ, պլաստիկե տարայում (50) հունգարական կամ համարժեք
47	Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրոքսիդ	B01AC30	դեղահատ	6000	ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրոքսիդ (150մգ+30.39մգ) (30,100) դանիական կամ համարժեք
48	Ցինարիզին	N07CA02	դեղահատ	30000	ցինարիզին 25մգ (50, 50/5x10/) բուլղարական կամ համարժեք
49	Պիրացետամ, ցինարիզին	N06BX	դեղահատ	2000	պիրացետամ, ցինարիզին (0,4գ+0,025գ), բլիստերում (30/3x10/, 60/6x10/,90/9x10/) ռուսական կամ համարժեք
50	Պիրացետամ	N06BX03	ամպուլ	50	պիրացետամ 200մգ/մլ, 5մլ ամպուլներ (10) հայկական կամ համարժեք
51	Պիրացետամ	N06BX03	դեղահատեր թաղանթապատ	150	դեղահատեր թաղանթապատ 800 մգ հունգարական կամ համարժեք
52	Պենտոքսիֆիլին	C04AD03	դեղահատ	240	պենտոքսիֆիլին 100մգ, բլիստերում (60/6x10/) հնդկական կամ համարժեք
53	Դիոսմին, հեսպերիդին	C05CA53	դեղահատ	240	դիոսմին, հեսպերիդին 450մգ+50մգ (30/2x15/, 60/4x15/) ֆրանսիական կամ համարժեք
54	Տրոքսերուտին	C05CA04	դեղապատիճներ կոշտ	300	տրոքսերուտին 300մգ, բլիստերում (50/5x10/) բուլղարական կամ համարժեք
55	Տրոքսերուտին	C05CA04	պարկուճ	5	տրոքսերուտին 20մգ/գ, 40գ ալյումինե կամ պլաստիկե պարկուճ բուլղարական կամ համարժեք
56	Հեպարին նատրիում	C05BA03	պարկուճ	3	հեպարին (հեպարին նատրիում) 100000ՄՄ/գ, 30գ, ալյումինե պարկուճ իտալական կամ համարժեք
57	Հեպարին (հեպարին նատրիում)	B01AB01	սրվակ	1	լուծույթ 25000ՄՄ 5մլ բելառուսական կամ համարժեք
58	Դեքսամեթազոն (դեքսամեթազոնի ֆոսֆատ) 4մգ/մլ	H02AB02	լուծույթ ներարկման	5	դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիումի ֆոսֆատ) 4մգ/մլ, 1մլ, հայկական կամ համարժեք
59	գլյուկոզամին (գլյուկոզամինի սուլֆատ), քոնդրոիտինի սուլֆատ, իբուպրոֆեն	M09AX	դեղապարկուճ	360	գլյուկոզամինի հիդրոքլորիդ, քոնդրոիտինի սուլֆատ 500մգ+400մգ, պլաստիկե տարայում (30, 60 և 120) միացյալ նահանգների կամ համարժեքը
60	Կալցիումի կարբոնատ, խոլեկալցիֆերոլ	A12AX	դեղահատ	400	կալցիումի կարբոնատ, խոլեկալցիֆերոլ 1250մգ+5մկգ (20, 50, 100), պլաստիկե տարայում, նորվեգիական կամ համարժեք
61	Դիկլոֆենակ 100մգ	M01AB05	դեղահատ	4000	դիկլոֆենակ նատրիումի 100մգ, բլիստերում (100/10x10/) կորեական կամ համարժեք
62	Դիկլոֆենակ 50մգ	M01AB05	դեղահատ	3000	դիկլոֆենակ նատրիումի 50մգ, բլիստերում (100/10x10/) կորեական կամ համարժեք
63	Դիկլոֆենակ	M01AB05	ամպուլ	60	դիկլոֆենակ նատրիումի 25մգ/մլ, 3մլ ամպուլներ (5) ուկրաինական կամ համարժեք
64	Դիկլոֆենակ	M01AB05	պարկուճ	6	դիկլոֆենակ նատրիումի 10մգ/գ, 30գ ալյումինե պարկուճ բելառուսական կամ համարժեք
65	Ինդոմետացին	M01AB01	դեղահատ	4500	ինդոմետացին 25մգ (30) բուլղարական կամ համարժեք
66	Ինդոմետացին	M02AA23	պարկուճ	8	ինդոմետացին 100մգ/գ, 40գ ալյումինե պարկուճ բելառուսական կամ համարժեք

67	Իբուպրոֆեն	M01AE01	դեղահատ	4400	իբուպրոֆեն 400մգ (100/10x10/) գերմանական կամ համարժեք
68	Պարացետամոլ	N02BE01	դեղահատ	5000	պարացետամոլ 500մգ (20/2x10/) բուլղարական կամ համարժեք
69	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), տրիացետոամին 4-տոլուենսուլֆոնատ	N02BB72	դեղահատ	3000	մետամիզոլ, տրիացետոամին 4 տոլուենսուլֆոնատ (500մգ+20մգ) (20) բուլղարական կամ համարժեք
70	Դրոտավերին	A03AD02	ամպուլ	30	դրոտավերինի հիդրոքլորիդ 40մգ/2մլ, ամպուլներ (25) հունգարական կամ համարժեք
71	Դրոտավերին	A03AD02	դեղահատ	2400	դրոտավերինի հիդրոքլորիդ 40մգ (20, 60, 100) հունգարական կամ համարժեք
72	Դիֆենհիդրամին	D04AA32	սրվակ	60	դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) 10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10) ուկրաինական կամ համարժեք
73	Ֆամոտիդին 20մգ	A02BA03	դեղահատ	1800	ֆամոտիդին 0.04գ (20/2x10/) բելառուսական կամ համարժեք
74	Օմեպրազոլ	A02BC01	դեղահատ	300	օմեպրազոլ 20 մգ (30/3x10/, 100/10x10/) հնդկական կամ համարժեք
75	Ռանիտիդին	A02BA02	դեղահատ	5000	ռանիտիդին 150մգ բլիստերում (30/3x10/) սերբիական կամ համարժեք
76	Պանկրեատին	A09A	դեղահատ	300	պանկրեատին (լիպազ 6000ՄԴՄՄ, ամիլազ 4500ՄԴՄՄ, պրոտեազ 300ՄԴՄՄ), հեմիցելյուլոզ, լեղու բաղադրամասեր հնդկական կամ համարժեք
77	Մետոկլոպրամիդ	A03FA01	դեղահատ	1200	մետոկլոպրամիդ 10մգ (50) խորվաթական կամ համարժեք
78	Մետոկլոպրամիդ	A03FA01	լուծույթ ներարկման	10	մետոկլոպրամիդ 5մգ/մլ (2մլ), 2մլ ամպուլներ (10)բելառուսական կամ համարժեք
79	Աճալ	A06AB06	դեղահատ	6000	սենոզիդներ 0.07գ (10, 20) ուկրաինական կամ համարժեք
80	Լոպերամիդ	A07DA03	դեղահատ	1200	լոպերամիդ 2մգ (10, 20) հայկական կամ համարժեք
81	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ)	R06AC03	սրվակ	40	քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ) 20մգ/մլ, 1մլ ամպուլներ (5) հունգարական կամ համարժեք
82	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ)	R06AC03	դեղահատ	1600	քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ) 25մգ, բլիստերում (20/2x10/), ապակե տարայում (20) հունգարական կամ համարժեք
83	Լևոթիրոքսին 150մկգ	H03AA01	դեղահատ	800	լևոթիրոքսինի նատրիում 150մկգ (100/4x25/) գերմանական կամ համարժեք
84	Լևոթիրոքսին 50մկգ	H03AA01	դեղահատ	300	լևոթիրոքսինի նատրիում 50մկգ (100/4x25/) գերմանական կամ համարժեք
85	Քլորամֆենիկոլ	D06AX02	պարկուճ	7	քլորամֆենիկոլ հեղուկաքսուք 0,1մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ ռուսական կամ համարժեք
86	Կետոպրոֆեն	M02AA10	պարկուճ	6	կետոպրոֆեն 25մգ/գ, 30գ ալյումինե պարկուճ իտալական կամ համարժեք
87	Քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ	D03AX50	պարկուճ	6	քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ 7,5մգ/գ+40մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ ուկրչաինական կամ համարժեք
88	Ձյութ, քսերոֆորմ	D08AX	պարկուճ	10	ձյութ, քսերոֆորմ 30մգ/գ ալյումինե պարկուճ բելառուսական կամ համարժեք
89	Էթանոլ 96%	D08AX08	լիտր	6	էթանոլ96%, 50մլ, 100մլ, 250մլ, 1000մլ շշիկ հայկական կամ համարժեք
90	Յոդ 5% սպիրտային լուծույթ	D08AG03	շշիկ	1800	յոդ 50մգ/մլ, 15մլ ապակե շշիկ հայկական կամ համարժեք
91	Նատրիումի քլորիդ	B05CB01	ամպուլ	200	նատրիումի քլորիդ լուծույթ ներարկման 0.9% (5մլ), 5մլ ամպուլներ (10) հայկական կամ համարժեք
92	Նատրիումի քլորիդ	B05CB01	պլ.փաթեթ	30	նատրիումի քլորիդ լուծույթ կաթիլաներարկման 0.9% (5մլ), պլաստիկե տարա, 250մլ ապակե սրվակ) հայկական կամ համարժեք

93	Նատրիումի քլորիդ	B05CB01	պլ.փաթեթ	30	նատրիումի քլորիդ լուծույթ կաթիլաներարկման 0.9% (5մլ), պլաստիկե տարա, 500մլ ապակե սրվակ) հայկական կամ համարժեք
94	Բամբակ ոչ ստերիլ 50գ		կգ	70	Ոչ ստերիլ բամբակ 50գր տուփերով
95	Վիրակապ ոչ ստերիլ 7*14		հատ	500	Ոչ ստերիլ բինտ չափսը 7*14 առանձին փաթեթներով
96	Վիրակապ ստերիլ 7*14		հատ	60	Ստերիլ բինտ չափսը 7*14 առանձին ստերիլ փաթեթներով
97	Կաթետերներ երակային 22G		հատ	15	22 G տրամաչափի որակյալ կատետր
98	Ներարկիչ 20,0 գր		հատ	200	Մեկանգամյա օգտագործման ներարկիչ ասեղով 20գր
99	Ներարկիչ 10,0գր		հատ	200	Մեկանգամյա օգտագործման ներարկիչ ասեղով 10գր
100	Ներարկիչ 5,0գր		հատ	1850	Մեկանգամյա օգտագործման ներարկիչ ասեղով 5գր
101	Սպեղանի 2,5*5մ		հատ	39	Սպեղանի բժշկական 2.5*5մ տուփերով, որակյալ
102	Դեղերի ներարկման համակարգեր		հատ	83	Ներարկման համակարգ ինֆուզիոն ֆիլտրով 21G տրամաչափի որակյալ հավաքածու

Ծանոթություն՝ 2.5 տարուց ավելի պիտառանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ 2.5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի 2/3-րդը
մինչև 2 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

*** Գնային առաջարկների ներկայացման ընթացքում համարժեքությունը որոշել ՀՀ դեղորայքի գրանցամատյանի ծածկագրերով (սյունյակ 3)**

ԳՆՈՐԴ

ք.Երևան Անդրանիկի 74շ.
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008102713
ՀՎՀՀ 01537679

_____
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

_____
(ստորագրություն)

Հավելված 2

<<___>>_____2014թ. կնքված

ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4 գնման պայմանագրի

<<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն>> ՊՈԱԿ-ի 2014 թվականին գնման ենթակա դեղորայքի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆԵՐԸ												ԸՆԴԱՄԵՆԸ
			Հունվ	փետ	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ	Սեպտ	Հոկտ	Նոյ.	Դեկտ.	
1	*2*	*3*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*
1	Ամօքսիցիլին+քլավուլանաթթու	դեղահատ			300.0			300.0			400.0				1000
2	Ացետիլսալիցիլաթթու	դեղահատ			200.0			200.0			100.0				500
3	Ամօքսիցիլին	դեղապարկուճ			1500.0			700.0			600.0		700.0		3500
4	Ամլոդիպին	դեղահատ			1000.0			1000.0			1000.0		1000.0		4000
5	Ատենոլոլ	դեղահատ			1000.0			1000.0			1000.0		1000.0		4000
6	Հիդրատացված դիհիդրալազինի սուլֆատ,ռեզերպին, հիդրոքլորոթիազիդ	դեղահատ			2000.0			1000.0			1000.0		2000.0		6000
7	Ացետիլսալիցիլաթթու	դեղահատ			300.0			300.0			600.0		300.0		1500
8	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում)	լուծույթ ներարկման			10.0			10.0			10.0		10.0		40
9	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում)	դեղահատ			200.0			100.0			200.0		100.0		600
10	Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին	դեղահատ			500.0			500.0			500.0		500.0		2000
11	Լեղի չոր, սխտոր չորացրած, եղնջի տերևներ, ակտիվված ածուխ	դեղահատ			400.0			200.0			200.0		200.0		1000
12	Սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ	դեղահատ			300.0			300.0			300.0		300.0		1200
13	Բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ)	դեղահատ			500.0			500.0			500.0		500.0		2000
14	Բիսակոդիլ	դեղահատ			1000.0			1000.0			1000.0		1000.0		4000
15	Սուլֆոկամֆորաթթու, նովոկայինի հիմք	ամպուլ			30.0						40.0				70
16	Ցեֆտրիաքսոն	փոշի ներարկման			10.0										10
17	Ցիպրոֆլօքսացին	դեղահատ			1000.0			500.0			500.0		1000.0		3000
18	Ֆլյուկոնազոլ	դեղապատիճ			10.0			10.0					10.0		30
19	Սալբուտամոլ	դեղահատ			100.0			100.0			100.0		100.0		400

20	Նիտրոֆուրանտոյին	դեղահատ			100.0			100.0			100.0		100.0		400
21	Նիտրոքսոլին	դեղահատ			300.0			200.0			200.0		300.0		1000
22	Նիֆեդիպին	դեղահատ			2000.0			1000.0			1000.0		1000.0		5000
23	Կապտոպրիլ	դեղահատ			1440.0			1440.0			1440.0		1440.0		5760
24	Պենտաէրիթրիտիլի տետրանիտրատ	դեղահատ			250.0			250.0			250.0		250.0		1000
25	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), հիդրոքլորոթիազիդ	դեղահատ			300.0			300.0			300.0		300.0		1200
26	Լիզինոպրիլ 10մգ	դեղահատ			480.0			480.0			480.0		480.0		1920
27	Վերապամիլ	դեղահատ			300.0			300.0			300.0		300.0		1200
28	Դիգոքսին	դեղահատ			1000.0			500.0			500.0		500.0		2500
29	Պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ)	ամպուլ			20.0			20.0					20.0		60
30	Բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ)	ամպուլ			40.0			40.0					40.0		120
31	Մագնեզիումի սուլֆատ	ամպուլ			10.0										10
32	Ամինոֆիլին	ամպուլ											10.0		10
33	Ամինոֆիլին	դեղահատ			600.0			600.0			600.0		600.0		2400
34	Ֆուրոսեմիդ	ամպուլ			10.0			10.0			10.0		10.0		40
35	Ֆուրոսեմիդ	դեղահատ			500.0			500.0			500.0		500.0		2000
36	Հիդրոքլորոթիազիդ	դեղահատ			300.0			200.0			200.0		300.0		1000
37	Իզոսորբիդի դինիտրատ	դեղահատ			500.0			500.0			500.0		500.0		2000
38	Ինոզին	դեղահատ			500.0			500.0			500.0		500.0		2000
39	Տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ)	դեղահատ			120.0						120.0		60.0		300
40	Էբաստին	դեղահատ			20.0			20.0			20.0				60
41	Պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին)	դեղահատ			30.0						30.0				60
42	Կատվախոտի հանուկ	դեղահատ			15250.0			15250.0			15250.0		15250.0		61000
43	Կատվախոտի ոգեթուրմ	22հկ			500.0			300.0			305.0		400.0		1505
44	Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում	դեղահատ			700.0			500.0			500.0		800.0		2500
45	Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում	դեղապատիճ			500.0			500.0			500.0		500.0		2000
46	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ)	դեղահատ կամ թաղանթապատ			1000.0			1000.0			1000.0		1000.0		4000
47	Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ	դեղահատ			2000.0			1000.0			1000.0		2000.0		6000
48	Ցինարիզին	դեղահատ			10000.0			5000.0			5000.0		10000.0		30000

49	Պիրացետամ, ցինարիզին	դեղահատ			500.0			500.0			500.0		500.0		2000
50	Պիրացետամ	ամպուլ			20.0			10.0			20.0				50
51	Պիրացետամ	պերորալ թաղանթապատ			30.0			30.0			50.0		40.0		150
52	Պենտոքսիֆիլին	դեղահատ			60.0			60.0			60.0		60.0		240
53	Դիոսմին, հեսպերիդին	դեղահատ			60.0			60.0			60.0		60.0		240
54	Տրոքսերուտին	դեղապատիճներ կոշտ			100.0			100.0			100.0				300
55	Տրոքսերուտին	պարկուճ			3.0						2.0				5
56	Հեպարին նատրիում	պարկուճ			2.0						1.0				3
57	Հեպարին (հեպարին նատրիում)	սրվակ			1.0										1
58	Դեքսամեթազոն (դեքսամեթազոնի ֆոսֆատ) 4մգ/մլ	լուծույթ ներարկման			5.0										5
59	գլյուկոզամին (գլյուկոզամինի սուլֆատ), քոնդրոիտինի սուլֆատ, իբուպրոֆեն	դեղապարկուճ			120.0			120.0			120.0				360
60	Կալցիումի կարբոնատ, խոլեկալցիֆերոլ	դեղահատ			100.0			100.0			100.0		100.0		400
61	Դիկլոֆենակ 100մգ	դեղահատ			1000.0			1000.0			1000.0		1000.0		4000
62	Դիկլոֆենակ 50մգ	դեղահատ			1000.0			500.0			500.0		1000.0		3000
63	Դիկլոֆենակ	ամպուլ			20.0			20.0					20.0		60
64	Դիկլոֆենակ	պարկուճ			2.0						2.0		2.0		6
65	Ինդոմետացին	դեղահատ			1500.0			1500.0			500.0		1000.0		4500
66	Ինդոմետացին	պարկուճ			2.0			2.0			2.0		2.0		8
67	Իբուպրոֆեն	դեղահատ			1100.0			1100.0			1100.0		1100.0		4400
68	Պարացետամոլ	դեղահատ			2000.0			1000.0			1000.0		1000.0		5000
69	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), տրիացետոամին 4-տոլուենսուլֆոնատ	դեղահատ			500.0			1000.0			500.0		1000.0		3000
70	Դրոտավերին	ամպուլ			10.0			10.0					10.0		30
71	Դրոտավերին	դեղահատ			600.0			600.0			600.0		600.0		2400
72	Դիֆենհիդրամին	սրվակ			20.0			20.0			10.0		10.0		60
73	Ֆամոտիդին 20մգ	դեղահատ			450.0			450.0			450.0		450.0		1800
74	Օմեպրազոլ	դեղահատ			100.0			50.0			50.0		100.0		300
75	Ռանիտիդին	դեղահատ			2000.0			1000.0			1000.0		1000.0		5000
76	Պանկրեատին	դեղահատ			100.0			100.0					100.0		300
77	Մետոկլոպրամիդ	դեղահատ			300.0			300.0			300.0		300.0		1200
78	Մետոկլոպրամիդ	լուծույթ ներարկման			10.0										10
79	Աճալ	դեղահատ			2000.0			1000.0			2000.0		1000.0		6000
80	Լոպերամիդ	դեղահատ			300.0			300.0			300.0		300.0		1200
81	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ)	սրվակ			10.0			10.0			10.0		10.0		40

82	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ)	դեղահատ			400.0			400.0			400.0		400.0		1600
83	Լևոթիրոքսին 150մկգ	դեղահատ			200.0			200.0			200.0		200.0		800
84	Լևոթիրոքսին 50մկգ	դեղահատ			100.0			100.0			100.0				300
85	Քլորամֆենիկոլ	պարկուճ			2.0			3.0			2.0				7
86	Կետոպրոֆեն	պարկուճ			2.0			2.0			2.0				6
87	Քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ	պարկուճ			2.0						2.0		2.0		6
88	Ձյութ, քսերոֆորմ	պարկուճ			2.0			3.0			2.0		3.0		10
89	Էթանոլ 96%	լիտր			2.0			2.0					2.0		6
90	Յոդ 5% սպիրտային լուծույթ	22հկ			450.0			450.0			450.0		450.0		1800
91	Նատրիումի քլորիդ	ամպուլ			50.0			50.0			50.0		50.0		200
92	Նատրիումի քլորիդ	պլ.փաթեթ			10			10					10		30
93	Նատրիումի քլորիդ	պլ.փաթեթ			10			10					10		30
94	Բամբակ ոչ ստերիլ 50գ	կգ			20			10			20		20		70
95	Վիրակապ ոչ ստերիլ 7*14	հատ			150			100			150		100		500
96	Վիրակապ ստերիլ 7*14	հատ			20			10			20		10		60
97	Կաթետերներ երակային 22G	հատ			5			5			5				15
98	Ներարկիչ 20,0 գր	հատ			50			50			50		50		200
99	Ներարկիչ 10,0գր	հատ			50			50			50		50		200
100	Ներարկիչ 5,0գր	հատ			500			500			350		500		1850
101	Սպեղանի 2,5*5մ	հատ			10			9			10		10		39
102	Դեղերի ներարկման համակարգեր	հատ			20			23			20		20		83

ԳՆՈՐԴ ***ՎԱՃԱՌՈՂ***

ք. Երևան Անդրանիկի 74շ.
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008102713
ՀՎՀՀ 01537679

_____
(ստորագրություն)

_____
(ստորագրություն)

Հավելված 3
<<___>>_____2014թ. կնքված
ՏՍԿ/14-ՇՀԱՊՁԲ-11/4 գնման պայմանագրի

<<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն>> ՊՈԱԿ-ի 2014 թվականին գնման ենթակա դեղորայքի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Վճարման ենթակա գումարը	Այդ թվում նախատեսվում է ֆինանսավորել տարեսկզբից աճողական կարգով											
				Հունվ	փետ	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ	Սեպտ	Հոկտ	Նոյ.	Դեկտ.
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*
Ա	Դեղորայք		**100%**				10%	20%	30%	40%	50%	60%	70%	90%	100%

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ք. Երևան Անդրանիկի 74շ.
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008102713
ՀՎՀՀ 01537679

_____
(ստորագրություն)

_____
(ստորագրություն)

Հավելված N 4
<<___>> _____ 2014թ. կնքած
ՏՍԿ/14-ՇՀԱՊՁ-11/4 գնման պայմանագրի

ՎԱՃԱՌՈՂ **ԳՆՈՐԴ**

ՀՀ ք. Երևան Անդրանիկի 74շ.
հ/հ 163008102713
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ
ՀՎՀՀ 01537679

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<__>>_____ 2014թ.

Պայմանագրի անվանումը _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը <<_____>>_____2014թ.

Պայմանագրի համարը _____

Գնորդը, ի դեմս _____ և Վաճառողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ ՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը <<___>>_____ 2014թ–ից <<___>>_____2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Մատակարարումների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/
Ընդամենը	---------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց

_____
(ստորագրություն)

Ազգանուն անուն_____

Կ.Տ.

Մատակարարումն ընդունեց

_____
(ստորագրություն)

Ազգանուն, անուն_____

Կ.Տ.